ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» ---------- 2014թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 8-Ի
N3065-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասին և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետին համապատասխան.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Երևանի քաղաքապետի 2014 թվականի օգոստոսի 8-ի «Երևանի հ.65 մակապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը միացման ձևով վերակազմակերպելու մասին» N3065-Ա որոշումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Երևանի քաղաքապետի 2014 թվականի օգոստոսի 8-ի N3065-Ա որոշումը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

Երևանի Էրեբունի վարչական շրջանի Սարի Թաղի 9-րդ շարքի N2 հասցեում գտնվող «Երևանի հ.65 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) շենքը համաձայն «Հայսեյսմշին և ԿՊ ԳՀԻ» ԲԲԸ-ի եզրակացության, գնահատվել է խիստ անբավարար, վթարավտանգ, իսկ վնասվածության մակարդակը դասվում է 4-րդ աստիճանի: Այն ենթակա է ամբողջովին կազմաքանդման:

Ներկայումս Կազմակերպության շենքում գործունեություն չի իրականացվում, իսկ 2 խմբերը համապատասխան աշխատակիցներով տեղափոխվել են նույն թաղամասում գործունեություն իրականացնող Երևանի հհ. 66 և 67 մանկապարտեզներ: Ներկա պահին Կազմակերպությունը գործում է 4.5 միավոր հաստիքներով՝ 1 դրույք տնօրեն, 0.5 դրույք հաշվապահ (Կազմակերպության ընթացիկ փաստաթղթաշրջանառությունն ապահովելու համար) և 3 դրույք պահակներ (Կազմակերպության սեփականության իրավունքով պատկանող գույքը պահպանելու համար):

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ տվյալ թաղամասում գործունեություն է ծավալում նաև «Երևանի հ.66 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը, առաջարկվում է այն միացման ձևով վերակազմակերպել՝ միացնելով հիշյալ մանկապարտեզին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«Երևանի քաղաքապետի 2014 թվականի օգոստոսի 8-ի N3065-Ա որոշումը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության կամ բացակայության մասին

«Երևանի քաղաքապետի 2014 թվականի օգոստոսի 8-ի N3065-Ա որոշումը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չկա։

ՏԵՂԵԿԱՆՔ

«Երևանի քաղաքապետի 2014 թվականի օգոստոսի 8-ի N3065-Ա որոշումը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում սպասվելիք փոփոխությունների մասին

«Երևանի քաղաքապետի 2014 թվականի օգոստոսի 8-ի N3065-Ա որոշումը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի 2014 թվականի բյուջեի փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ